




**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ԲԵՅՐՈՒԹԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ**

**ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ՈՂՋՈՐՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ**

ՊԷՐՈՒՅ

Գոհությամբ կու տանք Բարձրեալն Աստուծոյ որ վերջապէս վերահաստատուեցա խաղաղութիւնը ձեր երկրին՝ գեղատեսիլ Լիբանանի մէջ, ի շահ և ի մխիթարութիւն բոլոր համայնքներուն և համայն լիբանանեան աստուածաւեր ժողովուրդին: Մենք երջանիկ ենք որ նաև Լիբանանի հայ համայնքը, մեր ժողովուրդի հաստատացեալ զաւակները, այժմ լծուած են իրենց վերքերը բուժելու և իրենց կրօնական, կրթական ու մշակութային կեանքը վերակազմակերպելու շինարար գործին:

Այդ շինարար ոգիով գրուած ձեր 29 յունուար 1977 թուակիր նամակը Մենք յուզումով կարդացինք: Մեր հաւատքի յափտեմական կեդրոն սուրբ Էջմիածնէն կը յղենք Մեր օրհնութիւնը ձեր կրթանուէր գործին, մաղթելով ձեզի բոլորիդ անսպառ բարի եռանդ ու անհատնում լատենտութիւն, որ-սլեզի կարճ ժամանակի մէջ, կարողանաք ամբողջապէս վերանորոգել և բարեկարգ վիճակի մէջ դնել ձեր կրթական հաստատութիւնը՝ Սահակեան-Մկրտիչեան գոլէճը, շարունակելու և հետզհետէ աւելի ծաւալելու համար անոր կրթական-դաստիարակչական առաքելութիւնը, հայ նոր սերունդներուն ստեղծելու և աւելի ջամբելով՝ լոյսը գիտութեան, շնորհները բարոյական մկարագրի և ջերմութիւնը հայրենասիրութեան:

Վստահ ենք թե՛ ձեր կրթական շինարար առաջադրությանց լիակատար յաջողության համար լայնօրէն իրենց բարոյական և նիւթական օժանդակութիւնը պիտի քերեն մեր ժողովուրդի բարեսիրտ բոլոր զաւակները, ուր որ ալ գտնուին հալ պիտի տարածքի վրայ: Մենք արտագին կոչ կ'ողողենք անոնց բոլորին և կ'օրհնենք բոլոր այն նուիրատուները, որոնք օգնության ձեռք պիտի երկարեն ձեզի, համագգային նշանակութիւն ունեցող Սահակեան-Մկրտիչեան գոլէճը վերաշինելու և գայն ամուր հիմքերու վրայ դնելու համար: Վստահ ենք նաև թե՛ Երրուպայի և Հիւսիսային ու Հարաւային Ամերիկաներու թեմական եկեղեցական կեդրոնները ևս պիտի ընդառնան ձեր դիմումներուն և նեցուկ պիտի հանդիսանան ձեր հանգանակիչ մարմիններուն:

Արդ, իբրև քաջալերանք ձեզ, խղճի պարտք կը նկատենք ի նպատակ Սահակեան-Մկրտիչեան գոլէճի վերաշինութեան հանգանակութեան մասնակցիլ տասը հազար դոլլարի նուիրատուութեամբ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի միջոցներէն:

Կը մատչենք որ լիակատար յաջողութեամբ պատկուի ձեր հանգանակութեան ազգանուէր գործը ի միախառնութիւն Մեզ և մանաւանդ պէրոյթահայ մեր հարազատ ժողովուրդին:

«Ողջ լերուք զօրացեալ սուրբ Հոգով և յսէտ օրհնեալ ի Տառնէ և ի Մէնջ». ամէն:

Գալ Դե Ռ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կոնդակս ի 14-ը մարտի
1977 փրկական ամի,
և ի տումարիս հայոց ՌՆԻԶ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 875

